

tice with less risky for lenders and more responsible for borrowers, big enough number of bank plastic card holders, but the problem of confidence's lack of the sector is not solved yet.

In order to solve this problem it's offered to establish ATM (automatic teller machine) and to assist spreading POS terminals (which is more important) in the settlements of plastic card holders, as well as to implement the projects aimed to increase financial awareness of the population.

## ВОЗМОЖНОСТИ УВЕЛИЧЕНИЯ ДОВЕРИЯ К ФИНАНСОВОЙ СИСТЕМЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Г. С. ЗАКОЯН  
Р. К. АСАТРЯН**

В финансовой системе РА произошли существенные изменения в период экономического перехода. Постепенно усовершенствовались взаимоотношения между финансовыми организациями и их клиентами, употребляя также достижения высоких технологий. В итоге теперь имеем новую практику кредитования с более низким кредиторским риском и с более высокой ответственностью заемщика, довольно большое количество пользователей банковских пластиковых карт, но проблема недостаточного доверия к сектору еще не решена.

Для решения этой проблемы предлагается банкам устанавливать банкоматы и способствовать распространению POS терминалов (что более важно) в поселениях владельцев пластиковых карт, а также осуществлять целевые программы направленные на увеличение финансовой осведомленности населения.

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՐՑԱՅԻՆ ՓՈՐՁԲ ԵՎ ԱՅՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀՆԱՐՎԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

**Յ. Ս. ԶԱՔՈՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*

*գործ պոդքստոր*

**Մ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*«Գարանտ ինշուրան» ապահովագրական ՓԲԸ մասնագետ*

**Գ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*գործ մագիստրասուրայի լկուրսի ուսանող*

Հայտնի է, որ ներկայումս մոլորակի բնակչության շուրջ 13%-ը թերսնված է ապրում<sup>1</sup>: Չնայած դրան՝ երկիր մոլորակի բնակչությունը տարեցտարի ավելանում է՝ իր հետ բերելով պարենային ապրանքների նկատմամբ պահանջարկի անընդիատ աճ:

Վերը նկարագրված պատկերը ստիպում է գյուղատնտեսական մթերքների

<sup>1</sup> <http://usa.wfp.org/news-story/what-you-need-know-about-hunger-2012>

արտադրության ավելացման վրա ավելի մեծ ուշադրություն դարձնել և համակողմանիորեն նպաստել տնտեսության այս՝ հիմնականուն պարենային ապրանքներ արտադրող ճյուղի զարգացմանը:

Սակայն գյուղատնտեսության ներուժը ոչ միշտ է լիարժեք օգտագործվում: Օրինակ՝ ՀՀ-ում ներկայումս վարելահողերի ավելի քան 30%-ը մնում է աննշակ: Նման անցանկալի իրավիճակը պայմանավորված է մի շարք պատճառներով, որոնց մեջ իր առանցքային դերն ունի գյուղատնտեսական ապահովագրության բացակայությունը:

Այլ երկրների փորձի ուսումնասիրություններից պարզել է, որ գյուղատնտեսության կայացած ապահովագրական համակարգ ունեցող պետություններում գյուղատնտեսության ոլորտը զարգանում է առաջանցիկ տեմպերով, իսկ որտեղ այդ համակարգը դեռևս չի ներդրվել՝ լուրջ դժվարությունների է հանդիպում: Այսինքն՝ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի առկայությունը գյուղատնտեսության ոլորտի զարգացման կարևորագույն հնարավորություն է ու նախապայման, իսկ դրա բացակայությունը՝ լուրջ խոչընդոտ:

Գյուղատնտեսության ապահովագրության գաղափարը ծագել է 1750թ-ին Ֆրանսիայում, երբ մի խումբ ֆերմերներ ստեղծեցին միություն՝ նպատակ ունենալով ապահովագրել գյուղատնտեսական գործունեության հետ կապված ռիսկերը: 1797թ-ին գյուղատնտեսության ապահովագրությունը ներդրվեց նաև Գերմանիայում: Այնուհետև, ելնելով այս համակարգի արդյունավետությունից, այն տարածվեց ամբողջ աշխարհով:

Գյուղատնտեսության ապահովագրությունը ինքնին գույքի և ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրության համակցություն է<sup>2</sup>: Սակայն տարբեր երկրներում այն հանդես է գալիս տարբեր ձևերով և տարատեսակներով:

Օրինակ՝ Գերմանիայում գյուղատնտեսության ապահովագրությունը հիմնականում իրականացվում է ասոցիացիաների կողմից: Ֆերմերային տնտեսությունների գերակշիռ մասը հանդիսանում են այդ ասոցիացիաների հիմնադիրները և անդամները, սակայն ասոցիացիայի անդամ չհանդիսացող տնտեսությունները նույնպես կարող են ապահովագրել իրենց ռիսկերը:

Գյուղատնտեսության ապահովագրության ամենատարածված տարատեսակը Գերմանիայում կարկտահարությունից ապահովագրությունն է: Այստեղ ապահովագրավճարների հավաքագրման և հատուցումների վճարման ամբողջ պրոցեսը համակարգվում է ասոցիացիաների աշխատակազմի կողմից: Սակայն հատկանշական է այն փաստը, որ հատուցման ենթակա վնասի գնահատումը իրականացվում է ասոցիացիայի անդամների, այսինքն՝ ֆերմերների կողմից: Չարաշահումներից և հարդախություններից խոսափելու համար ծևավորվել է հատուկ ընթացակարգ, ըստ որի ստեղծվել է վնասը գնահատող ֆերմերների միջտարածաշրջանային համակարգ: Այս համակարգի գործունեության տրամադրմանությունը կայանում է նրանում, որ տվյալ ռեգիստրի վնասի գնահատողները պետք է լինեն այլ ռեգիստրի ֆերմերներ:

Ֆրանսիայում կառավարության կողմից ստեղծվել է «Տարերային աղետների ֆոնդ»: Գյուղացիական տնտեսությունները այս ֆոնդին կատարում են վճարումներ, իսկ տարերային աղետների (ցրտահարություն, ջրհեղեղ, երաշտ, համաձա-

<sup>2</sup> Wiki-ins.ru

րակներ և նմանատիպ այլ աղետներ) դեպքում ֆոնդի փորձագետների կողմից իրականացվում է վնասի գնահատում, որից հետո վնաս կրած տնտեսությունները ստանում են փոխհատուցում: Ի դեպ, այս ֆոնդին ֆերմերային տնտեսությունները որևէ կերպ չեն անդամակցում և դրա դեկավարմանը չեն մասնակցում:

Իտալիայում և Իսպանիայում գյուղատնտեսության ապահովագրությունը հիմնականում իրականացնում են մասնավոր ապահովագրական ընկերությունները: Միաժամանակ կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները զգալի ֆինանսական աջակցություն են ցուցաբերում և ֆերմերային տնտեսություններին (իրենց վրա վերցնելով ապահովագրավճարի մի մասը հետևյալ համանասնություններով՝ Իտալիայում մինչև 50% պետական բյուջեն, մինչև 10% համայնքային բյուջենները, իսկ Իսպանիայում պետությունը փոխհատուցում է ֆերմերներին ապահովագրավճարի 20-44%-ը), և ապահովագրական ընկերություններին՝ նատչելի վերաապահովագրության միջոցով կիսելով ապահովագրական ընկերություններին ռիսկը: Իսպանիայում ապահովագրական ընկերությունների մեջ մասը միավորված են ասոցիացիաներում, որոնք պատասխանատու են ոլորտի ռազմավարությունը մշակելու և իրագործելու համար:

ԱՄՆ-ում և Կանադայում գյուղատնտեսական ապահովագրության համակարգերն ունեն բազմաթիվ ընդհանրություններ, ինչը պայմանավորված է հարևան երկրների միջև սերտ տնտեսական կապերի և պարբերաբար իրականացվող փորձի փոխանակման միջոցառումների հետ: Այս երկու գերտերություններուն գյուղատնտեսության ապահովագրությունն իրականացնում են մասնավոր ընկերությունները: Այստեղ գյուղություն ունի գյուղատնտեսական ապահովագրության երեք հիմնական տարրատեսակ՝

- «Սոլւտիջիսկ» (ծածկում է գրեթե բոլոր տարերային աղետների հետևանքով առաջացած վնասները),
- կարկտահարությունից և հրդեհներից ապահովագրություն,
- ֆերմերային տնտեսության նախընտրած կոնկրետ ռիսկից ապահովագրություն (օրինակ՝ ցրտահարությունից ապահովագրություն):

Պետական աջակցությունը այստեղ կայանում է նրանում, որ ԱՄՆ-ի դեպքում կառավարությունը, իսկ Կանադայի դեպքում կառավարությունը և տեղական ինքնակառավարման մարմինները «Սոլւտիջիսկ» ապահովագրության տեսակի ապահովագրավճարի մի մասը վերցնում են իրենց վրա (մինչև 50%): Բացի սրանից, պետությունը զգալի աջակցություն է ցուցաբերում նաև ապահովագրական ընկերություններին՝ իր վրա վերցնելով ապահովագրական հատուցման 50%-ը:

ԱՄՆ-ում և Կանադայում գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար պատասխանատու կառույցները արդեն մի քանի տասնամյակ է ինչ վարում են վիճակագրական հատուկ հաշվառում (APH - actual production history), որի հիմնական նպատակն է ապահովագրական ընկերություններին ու շահագրգիռ այլ անձանց տրամադրել արժանահավատ տեղեկություններ անասնաբուծական և բուսաբուծական արտադրության վերաբերյալ: Իսկ ապահովագրական ընկերությունները, հիմնվելով այդ տեղեկությունների վրա, որոշում են ռիսկայնության աստիճանը, ապա՝ ապահովագրավճարները:

Հյուսիսային Ամերիկայում գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում արձանագրվել են հետևյալ ցուցանիշները՝

● Վերջին 20 տարիներին այդ շուկան զգալիորեն աճել է (օրինակ՝ ԱՄՆ-ում ապահովագրական ընկերությունները գյուղատնտեսության ապահովագրության գծով 1988թ-ին հավաքագրել են 800 մլն դոլարի ապահովագրավճար, իսկ արդեն մեկ տասնամյակ անց այդ գումարը 6 անգամ աճել է),

● մեկ տասնամյակ շարունակ համաշխարհային շուկայի ընդհանուր ապահովագրավճարների 50%-ից ավելին հավաքագրում են ԱՄՆ-ն և Կանադան:

Ինչպես Եվրոպայի զարգացած երկրներում, այնպես էլ ԱՄՆ-ում և Կանադայում կառավարությունները մեծ ակտիվությամբ փորձում են պաշտպանել գյուղագրավարություններին: Եթե նախկինում այդ աջակցությունը կրում էր տարերային աղետների ժամանակ վնաս կրած ֆերմերներին պետական բյուջեից ից ուղղակի փոխհատուցում վճարելու բնույթ, ապա վերջին տասնամյակներին հաջողությամբ գործում է գյուղատնտեսության ապահովագրության համակարգը:

Այդ համակարգի ներդրման առաջին տարիներին ապահովագրական շուկայում գրանցվեց ապահովագրական ընկերությունների ստեղծնան բում (ԱՄՆ-ում նրանց թիվը հասավ 50-ի), բայց հետագայում թեժ մրցակցությունը շուկայից դուրս մղեց բույլերին, ինչի արդյունքում ԱՄՆ-ի շուկայում մնացին 17 ապահովագրական ընկերություններ, որոնցից 3-ը՝ խոշոր (հավաքագրում են ապահովագրավճարների ավելի քան 50%-ը):

Ուստատանի Դաշնությունում (այսուհետ ՈԴ) ապահովագրությունը որպես ֆինանսական ինստիտուտ գտնվում է զարգացման սկզբնական շրջանում: Այս իրավիճակը բնորոշ է զարգացող տնտեսություն ունեցող երկրների մեծամասնությամբ, այդ թվում և Հայաստանի Հանրապետությամբ: ՈԴ-ում կառավարությունը սուբսիդավորում է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին ապահովագրական պայմանագրեր կնքելու ընթացքում: Միևնույն ժամանակ ՈԴ գյուղատնտեսության նախարարությանը կից ստեղծվել է «Ապահովագրության ոլորտի աջակցության պետական գործակալություն», որի հիմնական խնդիրներն են՝

● ապահովագրության պետական աջակցության համար կազմակերպել միջոցառումներ,

● վերահսկողություն իրականացնել պետական բյուջեի այն միջոցների նկատմամբ, որոնք ուղղվում են գյուղատնտեսական ապահովագրությանը,

● ապահովագրության համար անհրաժեշտ ինֆորմացիոն բազան շահագրգիռ անձանց տրամադրելու համար վարել վիճակագրական հաշվառում (օրինակ՝ «գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների բերքատվության ու նթերատվության մատյանի» վարում):

● նախորդ տարիների փորձի ընդհանրացում և համակարգի կատարելագործման ուղղված առաջարկությունների ներկայացում (օրինակ՝ պետական աջակցության նոր մեխանիզմների մշակում):

ՈԴ-ում գյուղատնտեսական ապահովագրության ծավալները վերջին տարիների ընթացքում նույնպես աճել են: Եթե 2001 թվականին ապահովագրված են եղել 2240 տնտեսություններ՝ 24 ռեգիոններից, ապա 2005 թվականին իրենց բերքն ապահովագրել են արդեն 9894 տնտեսություններ՝ 66 ռեգիոններից:

Սակայն մի շարք երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, ապահովագրական հա-

մակարգից կամավոր օգտվելու սովորությունը գրեթե բացակայում է, իսկ պարտադրված ապահովագրական գործարքներում էլ եզակի չեն չարաշահումները: Չնայած դրան՝ ՀՀ-ում գործող ապահովագրական կազմակերպությունների միջև բավականին թեժ պայքար է ընթանում օրենքի ուժով պարտադրված ապահովագրական գործարքներում ներգրավվելու համար: Մինչդեռ գյուղատնտեսության ապահովագրության նկատմամբ դրանք հետաքրքրություն չեն ցուցաբերում:

Գյուղատնտեսության ապահովագրություն Հայաստանի Հանրապետությունում փորձ արվեց ներդնել 1990-ականների վերջերին՝ պետական կառավարման նարմինների օժանդակությամբ, սակայն այն կենսունակ չգտնվեց: Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողները հիմնականում խուսափում էին ապահովագրական գործարքներ կնքելուց, եթե պարտադրված չէին դա անել նպատակային վարկ ստանալու համար:

Այս իրավիճակը մի կողմից կապված էր ապահովագրական կազմակերպությունների նկատմամբ ունեցած ոչ բավարար վստահության ու տնտեսություն վարելու ավանդական սովորությունների, մյուս կողմից էլ՝ ցածր վճարումնակության հետ:

Որոշ հաշվարկների համաձայն, գյուղատնտեսական արտադրության ընդհանուր ծախսերի մեջ գյուղատնտեսության ապահովագրավճարի բաժինը տատանվում է 20-30%-ի միջակայքում, ինչը գյուղատնտեսական ապահովագրությունից խուսափելու լուրջ պատճառ է: Ապահովագրական ընկերություններն ել խուսափում են գյուղատնտեսական ապահովագրությունից, քանի որ բարենպաստ տարիներին այդ ապահովագրատեսակի գծով հավաքագրված ապահովագրավճարների 70-75%-ը, իսկ անբարենպաստ տարիներին՝ 80-85%-ը ուղղվում են ապահովագրական հատուցումներին:<sup>3</sup>

Քենց այս պատճառով է կարևորվում պետության դերը ֆերմեր և ապահովագրական ընկերություն փոխհարաբերություններում:

Ուսումնասիրթյունների արդյունքում պարզվել է, որ ներկայումս ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովության համակարգի ներդրման ճանապարհին առկա են հետևյալ խոչընդուները՝

- օրենսդրական դաշտի անկատարությունը,
- ֆերմերային տնտեսությունների փոքր չափերն ու մեծ թվաքանակը, ինչը բարդացնում է արտադրական գործընթացի նկատմամբ վերահսկողությունը ապահովագրական ընկերությունների և պետության կողմից, եթե նույնիսկ գյուղատնտեսական ապահովագրությունը ներդրվի (ֆերմերային տնտեսությունները հիմնականում չեն վարում փաստաթղթային հաշվառում, ինչի պատճառով ձեռնարկությունը չի կարողանա հիմնավորել ապահովագրական ընկերությանը, որ արտադրական գործընթացները կազմակերպվել են ժամանակին և պատշաճ որակով),

- գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ արժանահավատ վիճակագրության բացակայությունը,
- ապահովագրական կազմակերպությունների նկատմամբ ոչ բավարար վստահությունը,

<sup>3</sup> Strahrus.ru

- գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների մեջ մասի ցածր վճարունակությունը,
  - ապահովագրված գործելու սովորության/նշակույթի բացակայությունը,
  - համապատասխան որակավորում ունեցող մասնագետների պակասը:
- ՀՀ-ում գյուղատնտեսական ապահովագրության ներդրումը հնարավոր կլինի միայն վերոհիշյալ խոչընդուները հաղթահարելուց հետո, ինչը բավականին ժամանակ ու ջանքեր կպահանջի:

Սակայն մոտ ապագայում հնարավոր է պետության կողմից ապահովագրական ընկերությունների քվոտայավորման (օրենքի ուժով պարտադրված ապահովագրական գործարքներում ներգրավվելու աստիճանը գյուղատնտեսության ապահովագրության հետ փոխկապակցելով), սուբսիդավորման ու վերապահովման մեխանիզմների ներդրման միջոցով այդ ժամանակահատվածը էապես կրծատել:

#### **INTERNATIONAL EXPERIENCE OF AGRICULTURAL INSURANCE AND OPPORTUNITIES OF APPLYING IT IN THE REPUBLIC OF ARMENIA**

*H. S. ZAKOYAN  
M. G. SARGSYAN  
G. M. SARGSYAN*

Availability of agricultural insurance is a very important precondition for agricultural development in the Republic of Armenia. Via study of international experience, the obstacles were identified, overcoming of which will allow to establish agricultural insurance in Armenia.

#### **МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ СТРАХОВАНИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА И ВОЗМОЖНОСТИ ЕЕ ВНЕДРЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*Г. С. ЗАКОЯН  
М. Г. САРГСЯН  
Г. М. САРГСЯН*

Наличие страхования сельского хозяйства является очень важным предусловием для развития сельского хозяйства в Республике Армения. Посредством изучения международного опыта выявлены те препятствия, преодоление которых позволит внедрять страховку сельского хозяйства в Армении.